տական հրատարակության գործով։ Արգեն տպագրության է հանձնված առաջին հատորը։ Բացի այդ, ինստիտուտը տպագրության է պատրաստում մենագրական ուսումնասիրություններ՝ նվիրված Կոմիտասին, Մարտիրոս Ժարյանին, Ռոմանոս Մելիքյանին, Արամ Խաչատրյանին և ուրիշներին։

Ինստիտուտի հետազոտական կոլեկտիվը համարյա կրկնապատկվել է, աշխատանքի են հրավիրված, երիտասարդ ուժերի հետ միասին, սովետահայ արվեստագիտության նշանավոր դեմքեր։ Արվեստի ինստիտուտն այժմ ունի երաժշտության, կերպարվեստի, պարարվեստի պատմության և կինո-գիտության մեջ մասնագիտացող ասպիրանտներ։

Արվեստի ինստիտուտը տպագրության է հանձնել մի շարք արժեքավոր աշխատություններ, որոնցից հիշատակության արժանի են հետևյալները. արվեստագիտության թեկնածու Սրբուհի Լիսիցյանի «Հայկական ժողովրդական հինավուրց պարերն ու թատերական ներկայացումները» բառահատոր հետազոտության առաջին գիրքը, պրոֆ. Քր. Քուշնարյովի «Հայկական ժողովրդական միաձայն երաժշտության պատմության և տեսության հարցերից» վերնագրով ծավալուն . ուսումնասիրություն, տպագրության է հանձնված Ռ. Աբեանի՝ հայկական խազերի վերծանմանն ու ուսումնասիրությանը վերաբերող հետազոտությունը, ինչպես և հայկական կինոարվեստի առանձին հարցերին նվիրված մի ժողովածու, որով մեզանում կինո-գիտության հիմքերն են դրվում։

Գիտական նոր հաստատության առաջին քայլերն են սրանք։ Երբ հիմնարկը վերջնականապես ձևավորվի և նրա հետազոտական անձնակազմը եռանդուն ու նվիրված գործի՝ իր առաջ դրված գիտական խնդիրները հաջողությամբ լուծելու համար, ապա, կասկածից վեր է, որ ինստիտուտը ամենամոտիկ ապագայում կնվաճի ռեսպուբլիկայի արվեստագիտական մտքի կենտրոնին վայել հեղինակություն։

Ռ. ՎԱՐՈՒՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐԸ

Դեռևս 1955 թվականին Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտում կազմակերպվեց Արևելագիտական խումբ, որը զբաղվում էր Մերձավոր և Միջին Արևելքի երկրների արդի պատմության ու տնտեսության հարցերով։

Խմբում ընդգրկված աշխատակիցների ջանքերով մշակվեցին մի շարք կարևոր թեմաներ, հրատարակվեցին մենագրություններ, որոնց թվում Մ. Ներսիսյանի «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թթ.», Ե. Սարգսյանի «Օսմանական կառավարության ագրարային բաղաքականությունը Արևմտյան Հայաստանում 19-րդ դ. երկրորդ կեսին» և «Աշխատավոր մասսաների վիճակը ժամանակակից Թուրքիայում», Հ. Թրլանի «Պայքար նավթի համար» և այլ մենագրություններ։

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 40-ամյակի կապակցությամբ խումբը հրատարակեց Հ. Եգանյանի «Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և ազգային-ազատագրական շարժումները Իրանում (1917—21 թթ.)» և Ե. Սարգսյանի «Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և ազգա.ին-ազատագրական շարժումները Թուրքիայում (1918—1921 թթ.)» աշխատությունները։

Պատմության ինստիտուտի կազմում աշխատող արևելագետների խումբը ակտիվ կերպով մասնակցեց 1957 թ. հունիսին Տաշքենտում գումարված Արևելագետների Համամիութենական առաջին կոնֆերանսին, որին մասնակցում էին Միության տարբեր ռեսպուբլիկաների ու մարզերի արևելագետ պատմաբանները, տնտեսագետները, գրականագետներն ու լեզվաբանները։ Պետք է նկատել, որ կոնֆերանսին մասնակցում էին նաև Չինական Ժողովրդական ռեսպուբլիկայի, Կորեական Ժողովրդական-Դեմոկրատական ռեսպուբլիկայի, Վիետնամի Դեմոկրատական ռեսպուբլիկայի, Լեհաստանի, Չեխոսլովակիայի, Ռումինիայի և այլ երկրների ներկայացուցիչները։ Կոնֆերանսի նիստերում լսվեցին ավելի քան հարյուր զեկուցումներ՝ նվիրված արևելագիտության կարևոր խնդիրներին։ Հայաստանի արևելագետները կոնֆերանսում հանդես եկան հետաքրքիր զեկուցումներով։ Այսպես. պատմական գիտությունների թեկնածու Գ. Սարգսյանը զեկուցեց «Հելլենիստական ժամանակաշրջանում հին բաբելական քաղաքների դրության մասին» թեմայով, Բ. Զուգասզյանը՝ «Հայ և արևելյան ժողովուրդների գրական կա-

պերի պատմությունից միջնադարում» թեմայով։ «Մատենադարանի պարսկական ձեռագրերի պատմագրական արժեքի մասին» հաղորդումով հանդես եկավ պատմական գիտությունների թեկնածու Հ. Փափազյանը և այլն։

Սույն թվականի ապրիլին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Նախագահության որոշումով արևելագետների խմբի հիմքի վրա ստեղծվեց Արևելագիտական սեկտոր, որը և դարձավ Ակադեմիայի ինքնուրույն հիմնարկներից մեկը։

Նորաստեղծ սեկտորը զբաղվում է արաբական երկրների, Իրանի ու Թուրքիայի պատմության, տնտեսության և բանասիրության հարցերով։ Սեկտորը կազմված է վեց բաժիններից. 1. արաբական երկրների պատմության, 2. Թուրքիայի և Իրանի պատմության, 3. Մերձավոր և Միջին Արևելքի երկրների տնտեսության, 4. Մերձավոր և Միջին Արևելքի երկրների բանասիրության, 5. բրդագիտության, 6. սկզբնաղբյուրների հրատարակման։

Սեկտորի գիտա-հետազոտական պլանի համաձայն մշակվում են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են՝ խոշոր հողատիրությունը Իրանում 19-րդ դարի առաջին կեսին, հայկական աղբյուրները Օսմանյան Թուրքիայի արաբական վիլայեթների ազգային-ազատագրական պայքարի մասին (1904—1914), օսմանական Թուրքիայի ագրեսիվ պլանները Անդրկովկասում առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, ազգային հարցը հետպատերազմյան Թուրքիայում, նավթային կոնցեսիաները Մերձավոր և Միջին Արևելքում, սովետա-թուրքական հարաբերություններ 1925—1936 թթ., հողային հարաբերությունները և հարկային սիստեմը Արևմտյան Հայաստանում 16—17-րդ դարերում և այլն։

Սեկտորի մի քանի աշխատակիցներ կազմում են արաբերեն-հայերեն բառարան։

1958 թվականին սեկտորը կհրատարակի մի շարք նոր աշխատություններ, որոնց թվում՝ հայ-արաբական բարեկամությանը նվիրված հուշերի ժողովածուն, Ա. Սաֆրաստյանի կազմած «Թուրքական աղբյուրներ հայերի և Հայաստանի մասին», Ե. Սարգսյանի «Թուրքական ագրեսիան Անդրկովկասում 1918 թ.» մենագրությունները։ Բացի այդ, ընթացիկ տարում կհրատարակվի սեկտորի գիտական աշխատությունների ժողովածուի առաջին հատորը, որտեղ իրենց հոդվածներով հանդես կգան ինչպես սեկտորի աշխատակիցները, այնպես էլ ռեսպուբլիկայի այլ գիտական և ուսումնական հաստատությունների արևելագետները։

Սեկտորը գիտական կապեր է հաստատել մեր ռեսպուբլիկայի գիտական ուսումնական հաստատությունների, ինչպես և Մոսկվայի, Լենինգրադի և եղբայրական ռեսպուբլիկաների արևելագետների հետ։

Արևելագիտության հետագա զարգացման համար մեր ռեսպուբլիկայի մայրաքաղաք Երևանը ունի գիտական լայն հնարավորություններ. նշենք թեկուզ ձեռագրերի այնպիսի հարուստ մի գանձարանի առկայությունը, ինչպիսին է մեր Մատենադարանը, որտեղ կուտակված են մեծ քանակությամբ ձեռագրեր ոչ միայն հայերեն, այլև պարսկերեն, արաբերեն, թուրքերեն և արևելյան այլ լեզուներով, որոնք հարուստ նյութ են ընձեռում Մերձավոր և Միջին Արևելքի երկրների պատմության, գրականության և փիլիսոփայության վերաբերյալ։

Գիտությունների ակադեմիան մեծ ուշադրություն է դարձնում լայն պատրաստականություն ունեցող և արևելյան ու եվրոպական տարբեր լեզուներ տիրապետող գիտական կադրեր պատրաստելու գործին։

Գիտությունների ակադեմիայի Նախագահությունը նախատեսում է 1962 թվականին Արևելագիտության սեկտորի բազայի հիման վրա ստեղծել Արևելագիտության գիտա-հետազոտական ինստիտուտ, որը խոշոր չափով կնպաստի արևելագիտության զարգացմանը Հայաստանում։

Ե. ՍԱՐԳՍՅԱՆ
Հ. ԵԳԱՆՅԱՆ